ԿԻՐՈՎԱԿԱՆ
КИРОВАКАН
KIROVAKAN



ԳՄԴ 65.9 (2Հ)
Կ-538

Կազմող՝ **ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԻ ԲԱԲԱՅԱՆ**

Составитель **СУРЕН САРКИСОВИЧ БАБАЯН**

Presentation **S. BABAYAN**

Թարգմանիչներ՝ Ա. Վ. Հովակիմյան
Մ. Հ. Գյուլդերյան

© «Պարբերական» արտադրահրատարակչական միավորում, 1989

ԿԻՐՈՎԱԿԱՆ
КИРОВАКАН
KIROVAKAN

«ՊԱՐԲԵՐԱԿԱՆ» ԱՐՏԱԴՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՈՒՄ
ԵՐԵՎԱՆ, 1989

Ս.Մ.ԿԻՐՈՎ
С.М.КИРОВ


ГОСТИНИЦА КИРОВ


XVIII

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կիրովականի մասին լուսանկարչական ալբոմ-ուղեցույցը տպագրության ընթացքում էր, երբ աշխարհով մեկ տարածվեց 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի ու նրա պատճառած ողբերգության բոթը:

Արհավիրքը մի ակնթարթում ավերակույտի վերածեց այն ամենը, ինչ համբերությամբ, սիրով ու երազանքով կառուցվել է դարերի ընթացքում: Ամբողջովին ավերվել է Սպիտակ քաղաքն ու հարյուրավոր բնակավայրեր: Անմասն չեն մնացել Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքները՝ տալով բազմահազար զոհեր:

Հայաստանում կատարված երկրաշարժը ոտքի հանեց սովետական բազմազգ ժողովրդին, ողջ աշխարհը թևեր առած թռավ Խորհրդային Հայաստան՝ փրկելու ճնշող փլատակների տակ գտնվող մարդկանց, վերացնելու դաժան արհավիրքի հետևանքները, բուժելու բիբլիական այն հողը, որը համաշխարհային ջրհեղեղից փրկել էր մարդկությունը:

Ժամանակակից գիտությունը անզոր եղավ գուշակելու հայ ժողովրդի դեմ նյութվող բնական աղետը, կանխել նրա չարամիտ պահը, չկարողացավ փրկել անգամ մանուկներին...

Եվ հիմա, երբ թվում է մայրը կխելագարվի որդու կորստից, երբ հարազատի մարմինը փլատակների տակից գտնելն ու հողին հանձնելը ամենամեծ մխիթարությունն է, ավերվածը նորովի կառուցելու սովոր հայ ժողովուրդը, նրա մեջ նաև հրաշքով փրկված, անօթևան լենինականցին, կիրովականցին, սպիտակցին, ստեփանավանցին, մտաբերելով իր նախնիների անցյալը, նաև մաքառելով հարատևելու պատգամը, թափ է տալիս իրեն, ուղղում ուսերը և իմաստավորող հայացքով մտածում վաղվա, ապագայի մասին:

Հայ ժողովրդի ուժը աղետին դիմանալու, դժբախտությունը հաղթահարելու, փլատակները վերացնելու և նորերը կառուցելու մեջ է: Այո, վերքերը դարմանելու, ապրելու, ազգովին հարատևելու համար անհրաժեշտ է կառուցել:

Այդ են հրամայում զոհվածները և անօթևան, հրաշքով փրկվածների հայացքները:

Եվ ամենակարևորը, մենք մենակ չենք: Որտե՞ղ և ե՞րբ է աշխարհին այսքան մեծ օժանդակություն ու անկեղծ կարեկցանքով օգնության հասնող այլազան ձեռքեր տեսել:

Կանցնեն տարիներ, որպես հիշատակ-բազմահազար զոհերի, փյունիկի պես վեր կհառնեն ավերված բանավաններն ու քաղաքները:

Ավերակներից կմաքրվի, կվերածնվի և նորից կշարունակի իր հավերժական ճանապարհը նաև երգի, խնդության, գողտրիկ վարդաքար Կիրովականը:

Եվ Կիրովական այցելող հյուրերն ու զբոսաշրջիկները այս ալբոմում զետեղված փողոցների, շենքերի, սրճարանների, տուրիստական հանգրվանների, մշակույթի տների փոփոխությունները համադրելով, կարծում ենք կշշնչան.

— Հավերժ հիշատակ զոհվածներին:

— Փառք այս քաղաքը վերակառուցողներին:

Լուսանկարչական այս ալբոմ-ուղեցույցը նվիրվում է Գուգարք աշխարհի սիրտը համարվող Կիրովականին՝ բնակչության թվով, արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով, մշակութային և գիտական նշանակությամբ ՀՍՍՀ երրորդ քաղաքին:

Հազարամյակների խորքից իր կենսագրությունը սկսած այս բնակավայրը սովետական իշխանության տարիներին, և առանձնապես վերջին տասնամյակների ընթացքում, անճանաչելիորեն փոխել է իր դեմքը, դարձել ժամանակակից քաղաք և վստահ քայլերով ընդառաջ է գնում իր ապագային:

Պատմական ընթացքի զարմանալի բերումով հազարամյակները ծերունական իմաստնության հետ Կիրովականից անբաժանելի են դարձրել պատանեկան խինդն ու ավյունը, և այսօր նա երիտասարդ է, իր ուժերին վստահ, ձեռնարկումների մեջ խիզախ ու համարձակ:

Տարիներն ու տասնամյակները, որ հիմա այս նոր քաղաքի կենսագրության վառ էջեր են դարձել, բազմաթիվ խորհրդանշական անուններ են պարգևել Կիրովականին՝ «Լոռվա գեղեցկուհի », «Առողջարանային քաղաք», «Ծաղկի քաղաք», «Երգի քաղաք», «Արդյունաբերական»...

Հազվադեպ կարող ես հանդիպել քաղաքի, որը միաժամանակ և արդյունաբերական կենտրոն լինի, և առողջարանային: Կիրովականում այսօր ժամանակակից արդյունաբերական տասնյակ ձեռնարկությունների հարևանությամբ գործում են միութենական առողջարաններ, հանգստյան տներ, պանսիոնատներ, պիոներական ճամբարներ:

Աշխատանքային հարուստ ավանդույթներով, իր վաստակով

Կիրովականը մի ուրիշ փառահեղ անուն էլ է վաստակել՝ «Վարպետների քաղաք...»:

Կիրովականի՝ վարպետների քաղաքի մասին է պատմում այս պատկերազարդ ալբոմ-ուղեցույցը:

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետակների միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մետր բարձրության վրա իր թևերն է տարածել ժամանակակից գեղեցիկ, բարետես քաղաք Կիրովականը, ուր այժմ շուրջ 170 հազար մարդ է բնակվում: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 145 կմ է, երկաթուղով՝ 224:

Կիրովականի կլիման մեղմ է, բարեխառն: Ձմեռը համեմատաբար տաք է՝ կայուն ձյունածածկով, ամառը՝ զով: Հունվարի միջին ջերմաստիճանը —4,2° C է, հուլիսինը՝ 19,7°C, նվազագույն ջերմաստիճանը՝ —32°C, առավելագույնը՝ 36°C: Քաղաքի միջով են հոսում Տանձուտ և Վանաձոր գետերը: Անտառապատ են Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերը: Եթե այս ամենին ավելացնենք հարմար աշխարհագրական դիրքը, հանքային աղբյուրների առատությունը, ապա պարզ կդառնա, թե Կիրովականն ինչու է հնուց ի վեր առողջարանային քաղաքի համբավ ձեռք բերել:

Կիրովականի տեղում եղած բնակավայրի պատմությունը սկսվում է հազարամյակների խորքից: Բայց դարերը, թվում է այս-

Կիրովականի քաղաքային կոմիտեի շենքը
Здание кироваканского горкома партии
Le bâtiment du comité de la ville.

Տեսարան Վ. Ի. Լենինի պողոտայից
Часть проспекта им. В. И. Ленина
Avenue V. Lénine

Ժողովրդական դեպուտատների գործադիր կոմիտեի շենքը
Здание исполнительного комитета Совета народных депутатов
Le bâtiment du comité exécutif des députés

Տեսարան Ստ. Շահումյանի հրապարակից
Вид на площадь им. Ст. Шаумяна
La place S. Chahoumian

տեղ ոչ մի հետք չեն թողել. ամենուրեք լայնահուն փողոցներ են, հրապարակներ, մշակույթի օջախներ ու ժամանակակից բազմահարկ շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ: Հնում եղած թաղամասը, որի շուրջը ձևավորվել է քաղաքը, գոյություն չունի:

Հնագետների երկարամյա աշխատանքն ապացուցեց, որ Տաշիր-Ձորագետի շրջանը և հատկապես Կիրովական քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով («Թագավորանիստ», «Մաշտոցի բլուր» «Քոսի ճոթեր» և այլն):

Բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. երրորդ հազարամյակ) դամբարաններ են հայտնաբերվել Դիմաց թաղամասում: Այստեղ մեծ ծաղկում է ապրել խեցեգործական արվեստը: Առաջին հայացքից հասարակ, անպաճույճ թվացող զարդանկարներն ու քանդակները դիտողի առաջ բացում են հինգ հազար տարի առաջ այս վայրերում ապրած երկրագործների ու անասնապահների մշակույթի, մըտածողության հետաքրքիր աշխարհը: Տեղական արտադրության՝ մետաղե, բրոնզե, իսկ հետագայում նաև երկաթե իրերի գտածոները ապացուցում են, որ այստեղ մեծ զարգացում է ապրել նաև մետաղագործությունը:

Նյութական մշակույթի նմուշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կիրովականի շրջակայքում բնակվող ցեղերը մ.թ.ա. III — I հազարամյակներում լայն

Բաքվի 26 Կոմիսարների հուշարձանը Ստ. Շահումյանի հրապարակում
Памятник 26-и комиссарам на площади им. Ст. Шаумяна
Monument aux 26 Commissaires de Bakou sur la place Chahoumian

շփման մեջ են եղել Անդրկովկասի, Փոքր Ասիայի, անգամ Մերձավոր Արևելքի հետ:

...Միջնադարյան Ղարաքիլիսա (Կիրովականի նախկին անունը) բնակավայրի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Միակ հետքը Վանաձորի կիրճում գտնըվող Պապանի գյուղն է: Նրանից ոչ հեռու այսօր էլ կարելի է տեսնել միջնադարյան եկեղեցու ավերակները: Գուգարքի հետ միասին Կիրովականի տարածքում գտնըվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին Կիրովականի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

Օտար նվաճողները՝ պարսիկները, թաթար-մոնղոլները, թուրքերը անընդմեջ գրավել, թալանել ու ավերել են Կիրովականը: 1801 թ. Վրաստանի հետ Ռուսաստանին միացավ նաև Լոռին, և Կիրովականը դարձավ սահմանային զորակայան:

1849 թվականից Կիրովականը Երևանի նահանգի մեջ էր: 1870 թվականից Դիլիջան — Կիրովական—Լենինական ճանապարհի, իսկ 1899 թվականից՝ Թիֆլիս—Կիրովական—Լենինական երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը մեծապես նպաստեց գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

1812 թվականին Ղարաքիլիսա

եկած եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը և Ռոբերտ Կեր Փորտը տեսել են խղճուկ մի գյուղակ՝ փայտե, հողածածկ տներով: Իսկ 1829 թվականին Ղարաքիլիսա եկած հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը վկայում է, որ այստեղ հազիվ 500—600 բնակիչ կար, որոնք գաղթել էին Երևանից: Հետագայում, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո՝ 1830-ին Կիրովականում բնակություն է հաստատել Արևմըտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիք:

...Հարուստ ու բազմաբովանդակ է Կիրովականի հեղափոխական անցյալը: 1890-ական թվականների անդրովկասյան մարքսիստական առաջին խմբակների գործունեությանը ակտիվորեն արձագանքում են նաև տեղի առաջադեմ հայացքների տեր բանվորներն ու մտավորականները: Հեղափոխական շարժումը առանձնապես լայն թափ է ստանում, երբ այստեղ են գալիս և ելույթներ ունենում հայ նշանավոր հեղափոխականներ Ստ. Շահումյանը (1905թ.) և Ալ. Մյասնիկյանը (1907թ.): 1917թ. Փետըրվարյան հեղափոխությունից հետո Կիրովականում ստեղծվում է բոլշևիկյան բջիջ, իսկ 1920 թվականի սկզբին այստեղ արդեն ձևավորված էր կուսկազմակերպությունը, որը կապված էր Արմենկոմի հետ և գործում էր նրա հրահանգներով: Նույն թվականի դեկտեմբերին 11-րդ Կարմիր բանակի ջոկատների օգնությամբ այստեղ հաստատվեց սովետական իշխանություն:

Հեղափոխական և ռազմահայրենասիրական փառավոր ավանդույթներ ունի Կիրովականը: Քաղաքի բազմաթիվ տներին փակցված հուշատախտակները պատմում են Կիրովական եկած Վ.Ի.Լենինի զինակիցներ Ստ. Շահումյանի, Ալ.Մյասնիկյանի, Մ.Կալինինի, Մ.Գորկու, սովետական, կուսակցական գործիչ Ա. Խանջյանի մասին:

Կիրովականցիները պարծանքով են հիշում սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարի կազմակերպիչներ Ա. Մռավյանին, Մխիթարյան քույրերին, Աշրաֆյանին և հպարտանում Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ մեկնած շուրջ չորս հազար կիրովականցիներով, Բելոռուսիայում զոհված, համաքաղաքացի, խիզախ պարտիզան Հ. Զաքարյանի սխրագործությամբ, հայ անվանի գրող Ստեփան Զորյանով...

Քաղաքն այսօր իմաստավորում ու զարդարում են Վ. Ի. Լենինի (1922թ.), Ս. Մ. Կիրովի, Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի, մեծ Հայրենականում զոհված հերոսների, հայ թատրոնի պարծանք

26 Կոմիսարների անվան պուրակը
Сквер им. 26-и комиссаров
Le parc de 26 Commissaires

Հովի. Աբելյանի հուշարձանները, լայնահուն պողոտաները բարձրաբերձ շենքերով, ընդարձակ հրապարակները, զբոսայգիները, ջրավազաններն ու շատրվանները:

Կիրովականի անցյալի ու ներկայի հերոսական նվաճումների մասին հարուստ նյութերն ամփոփված են քաղաքի երկրագիտական թանգարանի հինգ հազարից ավելի ցուցադրանմուշներում:

1935 թվականի հունվարին Հայկական ՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշեց անվուն հեղափոխական Ս. Մ. Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով Ղարաքիլիսա քաղաքը վերանվանել Կիրովական:

Գրեթե յոթանասուն տարի է անցել այն օրից, երբ քաղաքը նոր կյանք սկսեց: Ստեղծագործ աշխատանքի բեղմնավոր այդ շըրջանն անճանաչելիորեն փոխել է Կիրովականի դեմքը, նախկին գյուղաքաղաքը դարձել է ժամանակակից բազմաճյուղ արդյունաբերական, մշակութային, երկաթուղային և ավտոճանապարհային խոշոր կենտրոն:

Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններն այսօր տալիս են հանրապետության համախառն արտադրանքի 7,9 տոկոսը:

Քաղաքում գործող 10 արտա-



Ցուցանմուշներ Կիրովականի երկրագիտական թանգարանից (մ.թ.ա. 2-րդ հազ.)
Экспонаты кироваканского краеведческого музея (2-е тысячелетие до н. э.).
Objet exposés au musée ethnographique de Kirovakan (deuxième millénaire avant notre ère)

դրական և գիտաարտադրական միավորումները, 18 արդյունաբերական ձեռնարկությունները հարյուրավոր արտադրատեսակներ են թողարկում, որոնցից 100-ը պետական որականիշ են կրում: Ավտոմատ սարքերը, ճշգրիտ հաստոցները, ավտոգենային սարքավորումները, լուսատեխնիկական գործարանի և կարի արտադրական միավորման արտադրանքը առաքվում է արտասահմանյան 60 երկրներ, իսկ հանրապետությունում իր տեսակի մեջ միակ մորթու-մուշտակի ֆաբրիկայի արտադրանքը առաքվում է 100-ից ավելի հասցեներով: Այն մասնավորապես մեծ պահանջարկ ունի Սիբիրում, Ուրալում, Հեռավոր արևելքում:

Կիրովականյան մակնիշը կրող ժամանակակից միջազգային ստանդարտները բավարարող բազմաթիվ արտադրատեսակներ Լայպցիգի, Պլովդիվի, Մոսկվայի ցուցահանդեսներում բազմիցս արժանացել են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների:

Դարեր շարունակ տեղի արհեստավորները քար ու քանդակ են տաշել, պատ շարել, կռել ու կոփել երկաթը, թել մանել, գործել և ստեղծել, անվերջ ստեղծել... Հիմա նոր վարպետներ են շարունակում նրանց գործը:

Սովետական իշխանության առաջին տարիներին, երբ քաղաքում կառուցվեց արդյունաբերական առաջնեկներից մեկը՝ քիմիական գործարանը, վարպետ բառը նոր իմաստ, նոր բովանդակություն ստացավ: Ժողովուրդը վարպետներ անվանեց նաև առաջին քիմիագործներին, որոնք սովորեցին տեխնիկայի բարդ լեզուն, կարողացան կարճ ժամանակում յուրացնել երկրին այնքան անհրաժեշտ կարբիդի, մելամինի, հանքային պարարտանյութերի, բազմաթիվ քիմիկատների արտադրությունը: Բազմահազարանոց այս ձեռնարկությունը, որտեղ աշխատում է քաղաքի ամենաhին և ավանդույթներով հարուստ բանվորական ջոկատը հաջողությամբ է կատարում իր առջև դրված խնդիրները: Անդրկովկասում ամենախոշոր՝ Կիրովականի Մյասնիկյանի անվան քիմիական գործարանում է աշխարհում առաջին անգամ Սովետական Միության մասնագետների կողմից մշակվել ու ներդրըվել չընդհատվող մեթոդով մելամինի ստացման արտադրությունը: Կիրովականի քիմիագործները սովորել են կրկնել նաև բնության գործած հրաշքները: Այն, ինչ երկրի ընդերքում ձևավորվում է միլիոնավոր տարիների ընթացքում, Կիրովականի քիմիական գործարանում ծնունդ է առնում մի քանի ժամվա ընթացքում: Թանկարժեք բյուրեղները, կորունդի տարատեսակները, որոնք ասես իրենց մեջ են առել Լոռվա հրաշագեղ բնության բոլոր գույները, լայն կիրառություն ունեն հայրենական արդյունաբերության բազմաթիվ բնագավառներում:

Քաղաքի խոշոր ձեռնարկություններից են նաև քիմական մանրաթելերի, ճշգրիտ հաստոցների, «Ավտոգենմաշ», «Ավտոմատիկա» գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կարի արտադրական միավորումները, ուր մեծ աշխատանք է կատարվում տնտեսավարման նոր մեթոդների արմատավորման, արտադրության վերակառուցման և ինտենսիֆիկացման, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների ներդնման, կուսակցության որոշումների անշեղ կենսագործման ուղղությամբ:

Կիրովականը ժամանակակից գիտական մտքի քաղաք է: «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորումն իր բնագավառի առաջատար գիտական կենտրոններից է: Համարյա երեք տասնամյակ հետազոտողների մի մեծ կոլեկտիվ այստեղ ստեղծում է պոլիմերային սոսինձների նոր տեսակներ, որոնք լայն կիրառություն ունեն արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության բազմաթիվ բնագավառներում

նավաշինության, ռադիոտեխնիկայի, ավտոմոբիլային արդյունաբերության, պոլիգրաֆիայի, փայտամշակման և այլ ճյուղերում:

Ժամանակակից գիտության առաջատարներից է «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտը, որը գիտատեխնիկական սերտ կապերի մեջ է երկրի տասնյակ գիտահետազոտական հիմնարկությունների ու գործարանների հետ: Այստեղ նախագծվող արտադրության ավտոմատ կառավարման համակարգերը կոչված են ձեռնարկություններում ապահովել գիտատեխնիկական առաջադիմությունը, բարձրացնել արտադրության արդյունավետությունը: Ինստիտուտի մշակած համակարգերն այժմ հաջողությամբ աշխատում են նաև արտասահմանյան 30 երկրներում:

«Ավտոմատիկա» գիտաարտադրական միավորումը զարգացման լայն հեռանկարներ ունի: Տարիներ առաջ իր գործունեությունն սկսելով կատարողական պարզ մեխանիզմների նախագծմամբ, կոլեկտիվն այժմ ձեռնամուխ է եղել արդյունաբերական ռոբոտների և մանիպուլյատորների ստեղծմանը:

Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ ունեն Կիրովականի կահույքի, մորթու-մուշտակի, կարի ֆաբրիկաները, «Լոռի» հանքային ջրերի գործարանն ու թեթև արդյունաբերության այլ ձեռնարկություններ, որոնք տալիս են քաղաքի համախառն արտադրանքի 40 տոկոսից ավելին:

Սովետական կարգերի հաստատումից հետո քաղաքի արդյունաբերությանը զուգընթաց զարգացավ և բժշկությունը, լուսավորությունը, գիտությունն ու մշակույթը:

Եթե նախասովետական Կիրովականում ընդամենը մեկ մասնավոր դեղատուն կար, գյուղական մեկ հիվանդանոց, 2 բժիշկ, 4 բուժակ, ապա այսօր քաղաքն ունի 1115 մահճակալային տեղերով 15 հիվանդանոցային հաստատություններ, 23 պոլիկլինիկա ու ամբուլատորիա, տասնյակ դեղատներ, 360-ից ավելի բժիշկներ, 1500 միջին բժշկական անձնակազմ:

Հանրապետության ժողովրդական տնտեսության համար բարձրորակ կադրեր են պատրաստում քաղաքի երկու բարձրագույն ուսումնական հաստատությունները, հինգ տեխնիկումները, երեք պրոֆտեխնիկական ուսումնարանները, երաժշտական, նկարչական, հաշվապահական, սպորտային դպրոցները:

Ընդունված կարծիք է, որ մեծ արվեստը միշտ տանիք է որոնում մայրաքաղաքում: Կիրովականի հարուստ մշակութային առօրյան տարեցտարի ժխտում է այդ կարծիքը: Կիրովականում հիմա ըստեղծվել է կերպարվեստի մի յուրահատուկ դպրոց, որի առավել շնորհալի սաների ստեղծագործությունները հաջողությամբ ցուցադրվում են հանրապետական, միութենական և միջազգային ցուցահանդեսներում:

Կերպարվեստի պրոպագանդման գործում մեծ դեր են խաղում տեղի պատկերասրահն ու Ռուսական արվեստի թանգարանը, որոնց հարուստ ցուցադրություններում տեղ են գտել հայ, ռուս, արևմտաեվրոպական նկարիչների բազմաթիվ բարձրարվեստ կտավներ և քանդակներ:

Քաղաքի մշակութային կյանքի կենտրոններից է Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, որի ըստեղծագործական գործունեության հիսնամյակը լրացավ 1981 թվականին:

Թատրոնի բեմից հաճախ է հընչել այստեղ հյուրախաղերի եկած հայ թատրոնի պանծալի վարպետներ Սիրանույշի, Հ.Աբելյանի, Վ. Փափազյանի, Հ. Ներսիսյանի, Հասմիկի, Ա.Ոսկանյանի և անվանի շատ ու շատ դերասանների ձայնը:

Թատրոնի պրոֆեսիոնալ մակարդակի ու նրա դերասանների անհատական կարողությունների զարգացմանը մեծապես նպաստել են հայ անվանի ռեժիսորներ Ա. Բուրջալյանի, Տ. Շամիրխանյանի, Վ. Աճեմյանի բարձրարժեք բեմադրությունները:

Տարիների ընթացքում աճել, առնականացել են թատրոնն ու նրա անձնակազմը: Այսօր Կիրովականի Հ. Աբելյանի անունը կրող թատրոնի երիտասարդ, շնորհալի դերասաններով համալրված կոլեկտիվի ստեղծագործական նվաճումների՝ բարձրարվեստ ներկայացումների մասին դրվատանքով է խոսում հանրապետական և միութենական մամուլը, հեռուստատեսությամբ ցուցադրվում են նրա լավագույն ներկայացումները:

Համարյա հիսուն տարի առաջ, երբ կոմպոզիտոր Էդվարդ Կըզարթմյանը Կիրովականում ըստեղծում էր առաջին երաժշտական դպրոցը, քաղաքում ընդամենը մի քանի դաշնամուր կար: Այժմ Կիրովականում գործում են երաժշտական հինգ դպրոցներ, իսկ երաժշտական ուսումնարանը կադրեր է պատրաստում ամբողջ հյուսիսային Հայաստանի համար: Հարուստ և բազմազան է քաղաքի երաժշտական կյանքը, որին ակտիվ մասնակցություն են ցույց տալիս նաև ինքնագործ 15 երգչախմբեր, մանկական, գեղարդարվեստական ինքնագործունեության տասնյակ կոլեկտիվներ: Կիրովականի ամենասիրված կոլեկտիվներից են Հայհամերգի «Հորովել» անսամբլը և պետական երգչախումբը:

Հանքային բուժիչ ջրերով հարուստ Լոռվա գեղեցկուհի Կիրովականը միջին լեռնային գոտու

Քաղաքի պատմական հուշարձաններից
Исторические памятники города
Monuments historiques



11-րդ Կարմիր բանակի մուտքը Կիրովական (նկարիչ՝ Գ. Թովմասյան)
Въезд 11-ой Красной армии в Кировакан (художник Г. Товмасян)
La IIème Armée rouge fait son entrée à Kirovakan (tableau de G. Thovmassian)

կլիմայական առողջարանային քաղաք է: Մեծ համբավ ունի առանձնապես Վանաձորի գեղատեսիլ հովտում գործող «Հայաստան» առողջարանը: Այստեղ իրենց ակտիվ հանգիստն են անցկացնում ու բուժվում նյարդային համակարգի ֆունկցիոնալ խանգարումներով, նևրոզներով, շնչառական օրգանների ոչ տուբերկուլոզային, ծայրամասային նյարդային համակարգի և համանման այլ հիվանդություններով տառապող հիվանդները:

Քաղաքի ամենագեղեցիկ, կանաչապատ անկյուններից մեկում Վանաձորի հանգստյան գոտում են տեղաբաշխված նաև տուրիստական հանգրվանները, «Հայկական Արտեկ» պիոներական ճամբարի մասնաշենքերը, որտեղ տարեկան հանգստանում են տասը հազարից ավելի երեխաներ:

Բնության անձեռակերտ հուշարձանների մի հարուստ թանգարան է Կիրովականի շրջակայքը, մասնավորապես Լոռվա հռչակավոր ձորն իր գեղատեսիլ անտառներով, առեղծվածային քարայրներով, խաչքարերով, ճարտարապետական անկրկնելի հուշարձաններով, դարերի ընթացքում հյուսված ավանդույթներով ու լեգենդներով:

Երևի Կիրովականի մասին է ասված այն խոսքը, թե բնությունը վատ եղանակ երբեք չի ունենում: Այստեղ իրենց յուրահատուկ հըմայքն ունեն բոլոր եղանակները և, իհարկե, կիրովականյան ձմեռը:

Կիրովականցիները ձմեռային սպորտաձևերի հին երկրպագուներն են և «Լոռվա ձմեռ» տոնահանդեսի ժողովրդականությունը դրա վառ ապացույցն է: Գործարաններում, ֆաբրիկաներում, շինհրապարակներում իրենց գործը վարպետությամբ կատարողները նաև դահուկորդներ, սահնակորդներ են:

«Լոռվա ձմեռ» տոնահանդեսը նրանց իսկական հանգիստ, աշխատանքային նոր եռանդ է պարգևում:

Անցնում է ձմեռը, և նորից գարուն է վարպետների քաղաք Կիրովականում:

Բազմահազար սպորտասեր կիրովականցիները մարզվում կամ պարզապես իրենց առողջությունն են կոփում քաղաքային մարզադաշտում, Սպորտային պալատում, տասնյակ մարզահրապարակներում: Նրանք մի առանձին հպարտությամբ են շեշտում համաքաղաքացի՝ Սովետական Միության, Եվրոպայի և աշխարհի գավաթակիրներ Սամսոն Խաչատըրյանի, Ստեփան Սարգսյանի և անվանի շատ մարզիկների անունները:

Կիրովականցիները սիրում են Լոռվա հրաշագեղ բնությունը և պատահական չէ, որ հենց այստեղ ծնունդ առավ ու ավանդական դարձավ «Ծաղիկների տոնը»՝ մարդու ու բնության միասնության վառ արգասիքը: Սա իրոք տոնախմբություն է, ժողովրդական մի տոն, որին հազարավոր մարդիկ են մասնակցում: Ծաղիկները Կիրովականի ու նրա բնակիչների անբաժանելի մասն են: Այստեղ ծաղիկներ են նվիրում նրանց, ովքեր իրենց պսակել են աշխատանքային փառքով, ծաղկեփնջերով են ողջունում ամենասիրելի ու հարգված մարդկանց...

Կիրովականի ամենաժողովրդական տոնը նվիրված է երգին, այն երգին, որ օգնում է ապրել, կառուցել, արարել: Տասնյակ հազարավոր կիրովականցիներ են մասնակցում այդ տոնին, և երգերը, հայրենիքը փառաբանող հիմները նրանց շուրթերին են, նրանց սրտերում:

Թող դարերով հնչի քո երգը, հավերժ ճամփորդ Կիրովական՝ մանկան ժպտուն աչքերով քո Սանատորիական, Դիմաց, Բազում, Կայարանամերձ, Խնձորուտ թաղամասերով ապագային հավատով նայող քաղաք:

ВМЕСТО ПРЕДИСЛОВИЯ

Иллюстрированный альбом-путеводитель по Кировакану был в процессе печатания, когда по всему миру разнеслась весть о страшном землетрясении 7-ого декабря 1988 года в Армении и вызванной им трагедии.

Стихия в мгновение ока превратила в развалины всё, что терпеливо, с любовью и мечтой строилось веками армянским народом. Полностью разрушен город Спитак и сотни населённых пунктов. Стихия, повлекшая многотысячные жертвы, не пощадила и города Ленинакан, Кировакан, Степанаван.

Землетрясение в Армении подняло на ноги не только многонациональный советский народ, но и весь мир. В Армению прибыли со всех концов света, чтобы вызволить людей из-под развалин, ликвидировать последствия страшной стихии, возродить ту библейскую землю, которая спасла Человечество от всемирного потопа.

Современная наука оказалась бессильной предсказать грозную стихию, не пощадившую даже детей...

И сейчас, когда матери сходят с ума, потеряв сыновей, когда единственное утешение — это возможность найти и предать земле останки родных, привыкший восстанавливать разрушенное армянский народ (среди которого и чудом спасшиеся и оставшиеся без крова ленинаканцы, кироваканцы, спитакцы, степанаванцы) вспоминает завет предков — выжить!

Пережить беду, пересилить горе, убрать развалины и строить — это теперь самое главное для армянского народа. Чтобы залечить раны, выжить и жить — нужно строить.

Этого требуют и живые и погибшие.

Самое главное — мы не одни. Где и когда видел мир такое содействие и с искренним сочувствием столько протянутых на помощь рук.

Пройдут года, воспрянут разоренные города и поселки, как феникс из пепла, в память многотысячным жертвам...

Из руин возродится, продолжит свою дорогу в вечность и новый город Кировакан.

И сравнивая восстановленный город с фотографиями улиц, домов, кафе, туристических баз, домов культуры в этом альбоме. гости Кировакана, наверное, подумают:

— Вечная память погибшим!

— Слава строителям, восстановившим этот город!

Հարթաքանդակ Պուշկինի լեռնանցքում (Ա.Ս. Պուշկինի հանդիպումը Գրիբոեդովի աճյունը Պարսկաստանից Թիֆլիս տեղափոխող հայ գյուղացիների հետ):

Барельеф на перевале Пушкина (встреча А. С. Пушкина с армянскими крестьянами, везущими труп Грибоедова из Персии в Тифлис)

Bas-relief au col de Pouchkine (à l'emplacement où A. Pouchkine rencontra le cercueil de Griboédov transporté de Perse à Tiflis par les paysans arméniens)

Фотоальбом-путеводитель посвящается центру Гугаркской земли — Кировакану, третьему городу Армянской ССР по числу населения, по объему валовой продукции промышленности, по культурному и научному значению.

За годы Советской власти, особенно последних десятилетий, неузнаваемо изменился облик города. Он стал промышленным, культурным и научным центром республики.

Удивительное стечение исторических событий свели воедино в этом городе вдохновение и пыл молодости с мудростью тысячелетий — и сегодня он молод, уверен в своих силах, в своих начинаниях.

Годы и десятилетия, вписанные яркими страницами в биографию нового города, дали Кировакану множество символических названий: «Лорийская красавица», «Курортный», «Город цветов», «Город песен», «Промышленный», «Город мастеров»...

Здесь по соседству со многими современными промышленными предприятиями действуют санатории, дома отдыха, пансионаты союзного значения, пионерские лагеря.

Своими трудовыми традициями и достижениями Кировакан стяжал себе славу города-труженика, уверенно идущего навстречу своему будущему.

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու 150-ամյակի հուշարձան համալիրում:
У памятника-комплекса в честь 150-летия соединения Армении с Россией
Monument dédié au 150ème anniversaire de l'unification de l'Arménie orientale à la Russie



Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հուշարձանի մոտ
У памятника воинам погибшим в Великой Отечественной войне
Monument aux morts de la deuxième guerre mondiale

* * *

В северо-восточной части Армянской Советской Социалистической республики, в межгорной котловине между Памбакским и Базумским хребтами, там, где сливаются реки Памбак и Тандзут, на высоте 1350 метров над уровнем моря, раскинулся красивый современный город Кировакан, где проживает около 170 тысяч жителей. Расстояние до Еревана по автомагистрали 145 км, по железной дороге — 224.

Климат здесь умеренный, мягкий. Зима сравнительно теплая, с устойчивым снеговым покровом, лето — прохладное. Средняя температура в январе —4,2°С, в июле —19,7°С. Зафиксированная минимальная температура —32°С, а максимальная—+36°С. Город раскинулся в долинах рек Тандзут и Ванадзор. Северный склон Памбакского хребта лесист. Удобное географическое положение и обилие минеральных источников принесли Кировакану славу курортного города.

На месте старого горо-

да выросли широкие проспекты, площади, современные многоэтажные дома, промышленные предприятия, культурно-просветительные учреждения.

Многолетняя работа археологов доказала, что район Ташир-Дзорагета и, особенно территория города Кировакана, богат археологическими памятниками («Тагаворанист» /Престольный город/, «Холм Маштоца», «Коси чотер» и т. д.).

В районе квартала Димац были обнаружены гробницы бронзового и раннего железного веков (третье тысячелетие до н. э.). Здесь процветало гончарное дело. Орнаменты и барельефы, с первого взгляда кажущиеся простыми и незатейливыми, открывают для зрителей интересный мир культуры и мышления земледельцев и скотоводов, живших в этих местах пять тысяч лет назад. Находки бронзовых, а в дальнейшем и железных предметов местного производства, говорят о развитой в древности металлургии.

Изучение образцов материальной культуры показывает, что в III — I тысячелетиях до н. э. проживающие в окрестностях Кировакана племена имели связи с другими районами Закавказья, Малой Азии и даже с Ближним Востоком.

Сведений о средневековом поселении Каракилиса (прежнее название Кировакана) не сохранилось. Единственный памятник этих времен — развалины средневековой церкви недалеко от села Папани. Вместе с Гугарком, поселение находившееся на территории Кировакана, во II веке до н. э. входило в состав Большого Айка, а в X веке н. э. — Кюрикийского царства. Предполагается, что название Каракилиса (черная церковь) татарское, которое было дано в начале XIII в. по названию построенной из черного камня церкви, находившейся на холме к северу от Кировакана.

Иноземные завоеватели — персы, турки, неоднократно захватывали, грабили, разрушали Кировакан. В 1801г. Лори вместе с Грузией присоединились к России, а Кировакан стал пограничным гарнизонным городом. С 1849 года Кирова-

Գարնան տոնը Կիրովականում

Праздник весны в Кировакане

Fête du printemps à Kirovakan

кан входил в Ереванскую губернию.

С 1870 года строительство дороги Дилижан-Кировакан-Ленинакан, а с 1899 года строительство железной дороги Тифлис-Кировакан-Ленинакан, железнодорожной станции, почты и постоялых дворов благоприятствовало развитию Кировакана.

Европейские путешественники Джеймс Морнер и Роберт Кер Портер, в 1812 году посетившие Кировакан, увидели жалкую деревушку с деревянными избами и землянками. Великий просветитель армянского народа Х. Абовян свидетельствует, что здесь к 1820 году было всего 500—600 жителей, которые переехали из Еревана. В дальнейшем, в 1830 году, после присоединения Восточной Армении к России, в Кировакане поселилось несколько сот армянских семейств, мигрировавших из городов Западной Армении — Карса, Ардагана, Байазета и Эрзрума.

Богато и содержательно революционное прошлое Кировакана. В 1890-е годы местные передовые рабочие и представители интеллигенции активно откликаются на деятельность первых марксистских кружков Закавказья. Особенно широко революционное движение здесь развернулось после приезда и выступлений видных армянских революционеров Ст. Шаумяна (1905г.) и Ал. Мясникяна (1907г.). В 1917 году после Февральской революции в Кировакане организуется большевистская ячейка. а в начале 1920 года здесь была сформирована партийная организация, связанная с Арменкомом и действующая по его инструкциям. В декабре того же года с помощью отрядов II-й Красной армии здесь была установлена советская власть.

Кировакан имеет славные революционные и военно-патриотические традиции Мемориальные доски на многих домах города рассказывают о посетивших Кировакан соратниках В. И. Ленина — Ст. Шаумяне, Ал. Мясникяне, М. Калинине, М. Горьком, А. Ханджяне.

Кироваканцы с гордостью вспоминают об организаторах борьбы за установление советской власти — А. Мравяне, сестрах Мхитарян, Ашрафяне, гордятся четырьмя тысячами земляками, сражавшихся на фронтах Великой Отечественной войны, подвигом своего соотечественника, погибшего в Белоруссии, отважного партизана Г. Закаряна, известным армянским писателем Степаном Зоряном...

Сегодня город украшают памятники В. И. Ленину, С. М. Кирову, Ст. Шаумяну, Ал. Мясникяну, героям, погибшим в Великой Отечественной войне, Ованесу Абеляну — гордости армянского театра, широкие проспекты с высотными домами, площади, парки, бассейны и фонтаны.

Богатые материалы (свыше 5000 экспонатов), рассказывающие о героическом прошлом и трудовых буднях сегодняшнего Кировакана, собраны в краеведческом музее города.

В январе 1935 года Президиум ЦИК Армянской ССР принял решение увековечить память непоколебимого революционера С. М. Кирова и переименовать город в Кировакан.

Прошло почти 70 лет с того дня, как город начал жить новой жизнью. Этот период плодотворного творческого труда неузнаваемо изменил облик Кировакана, прежний поселок стал сегодня промышленным, культурным, научным центром республики.

Сегодня промышленные предприятия Кировакана дают 7,9% всей валовой продукции республики.

Действующие в городе 7 производственных и научно-производственных объединений, 18 промышленных предприятий выпускают сотни видов продукции, из которых 100 — с государственным Знаком качества. Автоматические и точные приборы, прецизионные станки, автогенные аппараты, продукции светотехнического завода и швейной фабрики экспортируются в 60 зарубежных стран, а единственная в своем роде в республике фабрика меховых изделий отправляет свою продукцию по более чем ста адресам. Эта продукция пользуется большим спросом особенно в Сибири, на Урале и Дальнем Востоке.

Многие виды продукции с кироваканской маркой неоднократно удостаивались золотых, серебряных и бронзовых наград на международных выставках в Лейпциге, Пловдиве, Москве.

В первые годы советской власти, когда в городе построили один из промышленных первенцев — химический завод, слово «мастер» получило новый смысл, новое значение. Народ прозвал мастерами и первых работников химической промышленности, которые научились сложному языку техники, смогли за короткое время освоить производство карбида, меламина, минеральных удобрений и множества других химикатов, которые были так необходимы для нашей страны, Это — многотысячное предприятие, где работает старая гвардия рабочих города и успешно решает поставленные перед ними задачи. Именно здесь, на кироваканском химкомбинате им.

Ал. Мясникяна, советскими специалистами впервые был разработан метод непрерывного производства меламина. Работники химической промышленности Кировакана соперничают с природой. То, что в недрах земли формируется в течении миллионов лет, на кироваканском химкомбинате зарождается буквально за несколько часов. Драгоценные кристаллы, разновидности корунда, которые, кажется, вобрали в себя все цвета чудесной природы Лори, широко применяются в разных отраслях отечественной промышленности.

К числу крупнейших предприятий города относятся также заводы химического волокна, прецизионных станков, «Автогенмаш», «Автоматика», трикотажное, мебельное и швейное производственное объединения, где проводится большая работа по внедрению новых методов экономии, перестройки производства и интенсификации, по внедрению новейших достижений науки и техники, по неуклонному выполнению решений партии.

Кировакан — город современной научной мысли. Научно-производственное объединение полимерных клеев — ведущий центр в своей области. Почти три десятилетия большой коллектив исследователей создает новые виды полимерных клеев, широко применяющихся в разных областях промышленности и народного хозяйства: кораблестроении, радиотехнике, автомобильной промышленности, полиграфии, деревообрабатывающей и т. д.

Свое лицо в современной науке имеет и научно-исследовательский институт НПО «Автоматика», имеющий тесные контакты с десятками научно-исследовательских учреждений и заводов нашей страны. Проектируемые здесь автоматические системы управления призваны ускорить научно-технический прогресс на предприятиях, поднять рентабельность производства. Разработанные институтом системы с успехом используют в 30 зарубежных странах. Научно-производственное объединение имеет широкие перспективы. В прошлом, начав свою деятельность с проектирования простейших механизмов управления, коллектив приступил к созданию промышленных роботов и манипуляторов.

В республике и за ее пределами большой популярностью пользуется продукция мебельной, меховой, швейной фабрик, завода минеральных вод «Лори» и других предприятий легкой промышленности, дающих свыше 40% валовой продукции города.

После установления советской власти здесь вместе с развитием промышленности, развивалась и медицина, просвещение, наука и искусство. Если в дореволюционном Кировакане были одна частная аптека, одна сельская больница, 2 врача, 4 фельдшера, то сегодня в городе — 15 лечебных учреждений на 1115 коек, 23 поликлиники и амбулатории, десятки аптек, свыше 360 врачей и 1500 человек среднего медицинского персонала.

Квалифицированные кадры для народного хозяйства республики здесь готовят 2 высших учебных заведения, 5 техникумов, 3 профессионально-технических училища, музыкальные, художественная, бухгалтерская и спортивная школа.

Богата культурная жизнь Кировакана. Здесь создана своеобразная школа живописи; произведения ее наиболее одаренных воспитанников с успехом демонстрируются на республиканских, всесоюзных и международных выставках. В пропаганде живописи большую роль играет местная картинная галерея. В ее богатой экспозиции представлены многочисленные полотна и скульптуры армянских, русских и западноевропейских художников.

Одним из центров культурной жизни города является государственный драматический театр им. Ованеса Абеляна, пятидесятилетие творческой деятельности которого отмечалось в 1981 году. Со сцены этого театра часто звучали голоса гастролировавших здесь славных мастеров армянского театра — Сирануш, О. Абеляна, В. Папазяна, Г.

Տեսարան քաղաքից
Вид на город
Vue de la ville

Нерсисяна, Асмик, А. Воскանян и многих других выдающихся артистов.

Развитию профессионального уровня театра и артистов способствовали постановки известных армянских режиссеров А. Бурджаляна, Т. Шамирханяна, В. Аджемяна.

Постепенно театр набирал силу. Сегодня о творческих успехах молодого и талантливого коллектива кироваканского театра им. Ов. Абеляна заговорила республиканская и союзная печать, лучшие постановки демонстрируются по телевидению.

Почти 50 лет назад композитор Эдвард Кзартмян создал в Кировакане первую музыкальную школу. Ныне в Кировакане действуют 5 музыкальных школ, музыкальное училище города готовит кадры для всей северной Армении. В разнообразной музыкальной жизни города принимают участие и 15 самодеятельных хоров, десятки художественных самодеятельных коллективов, среди которых много и детских, самые любимые и популярные — это государственный хор и ансамбль Армконцерта «Оровел».

Край богат минеральными источниками, а сам Кировакан является одним из лучших среднегорных климатических курортов. Особой известностью пользуется санаторий «Армения», расположенный в живописной долине Ванадзора. Здесь лечатся и активно отдыхают больные, страдающие функциональными нарушениями нервной системы, неврозами и болезнями дыхательных путей нетуберкулезного типа, периферийных нервных систем и т. д.

В самом красивом зеленом уголке города, в зоне Ванадзора, расположены туристские базы, корпуса пионерского лагеря «Армянский Артек», где ежегодно отдыхают свыше десяти тысяч детей.

Окрестности Кировакана — настоящий музей под открытым небом . Известное Лорийское ущелье с его живописными лесами, таинственными пещерами, хачкарами, неповторимыми архитектурными памятниками славится с давних пор в преданиях и легендах.

Наверное, это про Кировакан поется, что «у природы нет плохой погоды»; здесь хороши все времена года, особенно славится кироваканская зима.

